Երբ հասանք կամուրջ, նախ կղզիների նաւը փնտռեց, ուզում էր գնալ, փախչել. չունչը կտրում էր, չէր կարողանում դպել իրեն. մի քիչ յետոյ գաղափարը փոխեց, ձեռք տուաւ եւ արագ հեռացաւ:

Միւս օրը թերթերում կարդացի, որ Թաքսիմի մօտ, սիրտը ճաթել, վայր է ընկել:

Ու մեծաշուք մի թաղում էլ նրա՛ն արին...

Այսօր սարսափով մտածում եմ, մի՞թէ կարող է նորից կրկնուել:

Սկովտիացիները, մերկ զիստերով եւ յաղթական քայլերով անցնում են քաղաքից: Ռազմանաւերը կանգ են առել սպառնական:

Եւրոպան ներկայ է:

* * *

Ի՞նչքան կարեւոր է Պոլսից փախչել, Պոլիսը յաղթել:

Երազում եմ լինել Հայաստանի լեռներից մէկի վրայ, հովիւների հետ եւ գոնէ մէկ տարի ապրել նախնական, մտահայեցական կեանքով: Մոռանալ ամէն ինչ, դուրս նետել քաղաքակրթական արտաքին զգեստաւորումը, լինել միմիայն մարդ բովանդակ աշխարհի առջեւ եւ երեխայի աչքերով դիտել աստղերին եւ լսել տարածութիւնները:

Վերադառնա՛լ: Բայց վերադառնալ ո՞ւր: Ո՞րտեղացի ենք մենք, մտքի յաւիտենական ճամբորդներս:

Միշտ ծարաւ, միշտ անօթի, հոգեկան երազուած սեղանի առջեւ մուրացիկներս...

Հոգին երկրի պէտքն է զգում, ու միտքը սնունդ է առնում հողից:

Այստեղ, դաշտանկարը, ջուրի հոսողութեան եւ լոյսերի գունաւորումների տակ, անցողակի երեւոյթ է, պպզուն կայծկլտում եւ ոչ թէ դէպք: Գիտակցութիւնը զեղեւկոտ է, սահուն, անխարխափ: Իրերը անկայուն են, տեսլային, եւ ոչ մի օղակով չեն կապուած հոգեկան որոշումների հետ:

Խաչաձեւուած ճանապարհների ստուերները առաջնորդում են լոյսերին: Թաւալուող նիւթը, իր ոլորուն կայլակների ետեւից, քաշում տանում է եսը: Միտքը, անդեկ նաւակի նման, երերում է անհատի ծփուն մակերեսի վրայ:

Ահա ինչու, Պոլսում, կանայք գրականութիւն են մշակում, եւ զգում են իրենց, ինչպէս Սիօնում:

Քաղաքը կին է՝ օրգանապէս թերի, մշտընջենապէս վիրաւորուած եւ զերազանցօրէն սիրական:

Ուստի ստորին:

* * *

Պատոյտի ժամերին, շատ անգամ, կանգ եմ առնում փողոցի տղաների հայերէնը լսելու համար:

Ի՜նչ գեղեցիկ է, ինչքան ճկուն է պոլսահայերէնը:

Թեթեւ է, վերասլաց, ջուրակի սուր ձայների նման թրթռուն. գեղեցիկ կնոջ ոսկեթել հիւսուած շղարշ, որի վրայ լուսինը թիթեռնիկներ է բանտարկել: Ածականները թիավարուող նաւակների նման առաջ են սահում, մինչ բայերը, գրեթէ անշարժ, գեղեցիկ ափից հեռացող տեսարանն են դիտում:

Նախադասութիւնը նուազաւոր է եւ ներդաշնակ: Նապոլիտեան երգի նման նա չունչ է առնում շրթունքների ծայրին, ոլորուում բերնի մէջ, պտտում կոկորդի մօտ, շոյում առաստաղը եւ դուրս գալիս՝ ինչպէս թեթեւ հառաչանք:

Կերպընկալ է եւ հոսուն:

Բաղմական ոչ մի շեշտ կայ: Օրգանական ոչ մի միւութիւն, ոչ լոյս, այլ լոյսի խաղ, ոչ ծով, այլ կոհակների ծփծփանք: Այստեղ բառը, ինչպէս արարատեան լեզուի մէջ, չի կառչում մտքին սուր ակռաներով, դաղափարի ուսերի տակ մնկուած փայտ չէ, այլ թեթեւօրէն թեւարկող նշան, բոցի վրայ սլացող անտեսանելի ծուխ:

Կիլիկեան թաղուհիների հագած վենետիկեան թեթեւ կերպասների նման, բառերը մեղմօրէն սեղմում են ներդաշնակ մարմինը, եւ երկար ծալքերով վայր ընկնում գետին: Խաղում են անցնող հովի շնչի տակ, փայլփլում ջահերի անհանգիստ բոցերում, շոյում պալատի զարդերը, ծփում արեւմուտքից եկած ասպետների արծաթէ սաղաւարտների վրայ:

Պոլսահայ լեզուն քաղցր է: Նա պտուղ չէ. մտքերի բնական, հիւթեղ եւ անմիջական համը չունի: Երկարօրէն, բարակ ու նուրբ մատերով պատրաստուած անուշ է, որի համեմները հեռաւոր երկրներից են գալիս: Մատու-

Հայ մատենագրության թուանշանային գրադարան